

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

#### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

23.01.2017թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Վ. Գևորգյանը, Դ. Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս. Գրիգորյանը, Հ. Մկրտչյանը, Ն. Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյան - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա/ ՀՀ Վարչապետի՝ Լոռու մարզ կատարած այցի արդյունքների մասին  
բ/ ՀՀ Ազգային բանակի 25- ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին  
/Ա.Նալբանդյան/
2. ա/Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների և կատարված աշխատանքների մասին  
բ/ՀՀ համապետական ընտրությունների կազմակերպչական աշխատանքների կատարման ըթացքի մասին  
/Ձեկ. Ն.Սարգսյան/
3. «Յանդեքս» -ի կողմից ծրագրավորման դպրոցի բացման մասին  
/ Ձեկ. Լ.Ասլանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին  
/ Ձեկ. Հ.Պապոյան/
5. Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների , պարարտանյութերի բաշխման և պարտքերի հավաքագրման աշխատանքների մասին  
/ Ձեկ. Գ.Հակոբյան/
6. Այլ հարցեր:

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Համայնքների բյուջեների կազմման համաչափության առումով կատարված ուսումնասիրությունները քննարկել և 5-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և, ըստ ոլորտների ծախսերի հիմնավորվածության ու փոփոխությունների վերաբերյալ, առաջարկություններ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետի օգնականներ Ա. Սարգսյանին, Տ. Էվինյանին՝

Տարածաշրջաններում անցկացվող աշխատանքային խորհրդակցությունների ժամանակ տրված հանձնարարականներն արձանագրել և հետևողական լինել ու վերահսկել կատարման ընթացքը:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Սերմացուի պարտքեր ունեցող համայնքներում կազմակերպվող քննարկումների ընթացքում իրազեկել բնակչությանը և վերանայել նշված համայնքներին պետական միջոցներից տրամադրվող օգնությունների չափը և կարգը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Առաջարկել համայնքների ղեկավարներին, համագործակցելով կրթական հաստատությունների հետ, կազմակերպել Հայոց բանակի 25-ամյակին նվիրված միջոցառումներ և 2-օրյա ժամկետում միջոցառումների ծրագիրը ներկայացնել Լոռու մարզպետարան:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ա.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/